



ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05-04-2016թ.

Սիրելի հայրենակիցներ,

Ապրիլի 1-ից Արցախյան հակամարտության գոտում վերսկսել են պատերազմական գործողությունները: Արցախի Պաշտպանական Բանակը ծանր վնասներ է հասցրել նախահարձակ Ադրբեյջանական ուժերին, բայց, բնականաբար, ինքն էլ կրում է որոշակի կորուստներ:

Սվյուտֆի բոլոր համայնքներն ինքնակազմակերպվում են Արցախին աջակցություն ցուցաբերելու համար, և նյութաֆինանսական միջոցների ներհոսքը համակարգելու համար Արցախի Կառավարությունը ստեղծել է Հատուկ օպերատիվ շտաբ՝ Արցախի Վարչապետ Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ: Շտաբի կողմից պաշտոնական հայտարարությամբ (տես հայտարարությունն այստեղ) ներկայացվել են համապատասխան կոնտակտային տվյալներ և բանկային ռեկվիզիտներ:

Ժնևի Սբ. Հակոբ Եկեղեցու ծխական խորհուրդն այսօր 10'000 ԱՄՆ դոլար է ուղիղ բանկային փոխանցումով ուղղել Հատուկ շտաբի տրամադրած հաշվեհամարին: Կոչ ենք անում ձեր բոլոր անդամներին, իրենց հնարավորությունների սահմաններում ուղիղ դրամական փոխանցումներով իրենց աջակցությունը ցուցաբերել Արցախի ժողովրդին, բանակին և կառավարությանը:

Մենք սահմանին կանգնած չենք, բայց մեր երկրի թիկունքին կանգնած ենք:

Ժնևի Սուրբ Հակոբ Եկեղեցու ծխական խորհուրդ: